

ՎԱՂ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅԱՆ  
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Բառապաշարի իմաստային տեղաշարժերի ուսումնասիրման ոլորտում հայերենագիտությունը զգալի արդյունքներ է գրանցել: Մ. Աբեղյանից և Հր. Աճառյանից (առաջին հերթին պետք է շեշտել «Հայերեն արմատական բառարանում» ամբարված իմաստափոխական հսկա նյութը) բացի՝ խնդրին անդրադարձել են Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Մ. Մուրադյանը, Ռ. Ղազարյանը<sup>1</sup> և այլ ուսումնասիրողներ, արվել են նաև վաղ աշխարհաբարի առանձին հեղինակների երկերում հանդիպող նորակազմությունների մասին մասնակի դիտարկումներ<sup>2</sup>: Թեև պետք է ասել, որ Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» ուսումնասիրությունը գիտական այլ խնդիր է լուծում. այստեղ առավելապես ներկայացված է հայերենի «ձևության իմաստաբանության» ներկա վիճակը և իմաստափոխական դրսևորումների՝ որպես լեզվի զարգացման ընթացքի մասին քիչ բան է ասված: Գ. Ջահուկյանն ինքն էլ գրում է. «...ներկա աշխատությունը պետք է կոչվեր ժամանակակից հայոց լեզվի արմատագիտություն և բառակազմություն, որովհետև նրա հիմնական խնդիրն է արմատների և բառակազմական միջոցների ու ձևերի արտահայտության և բովանդակության պլանների ուսումնասիրությունը»<sup>3</sup>:

Մ. Աբեղյանը իմաստափոխության մի քանի հիմնական տեսակ է մատնանշում. 1. «Բառերի նշանակության փոփոխությունն իբրև հետևանք մշակույթի փոփոխության», ինչպես՝ նաև, քար: 2. «Մեռի անվան գործածությունն իբրև տեսակի ու անվան անուն և ընդհակառակը», օրինակ՝ հաւ, որձ, այդ թվում հատկանվանացում՝ Ծաղիկ, Մանուկ, Նորք: 3. «Բառերի փոխաբերական նշանակությունը նմանակման գուգորդությամբ» գլուխ, թերթ, պոչ: 4. «Բառերի նշանակության փոփոխությունը կցորդական գուգորդությամբ»՝ տուն, շրջապատ, ծուխ: Վերջինի մեջ թվարկում է մի քանի տարատեսակներ<sup>4</sup>: Բառերի իմաստի փոփոխության պատճառներ

<sup>1</sup> Էդ. Աղայան. Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, Գ. Ջահուկյան. Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989, Մ. Մուրադյան. Բառագիտություն.– Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. 2, Երևան, 1972, Ռ. Ղազարյան. Միջին հայերենի բառապաշարը, Երևան, 1992:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ՝ Ն. Հովհաննիսյան. Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն որպես վաղ աշխարհաբարի արտահայտություն.– Հայոց լեզվի պատմության հարցեր, պր. 3, Երևան, 1991, էջ 61–192, Ռ. Ղազարյան. Արևելահայ վաղ աշխարհաբարը ըստ Ջաքարիա Ագուլեցու «Օրագրութեան».– «Բանբեր Երևանի համալսարանի», 1995, -2, էջ 9–29:

<sup>3</sup> Գ. Ջահուկյան. նշվ. աշխ., էջ 6:

<sup>4</sup> Տե՛ս Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 14–163:

են լինում փոխաբերությունը, փոխանունությունը, համըմբռնումը և այլն:

Հայերենագիտության մեջ, Մ. Աբեղյանի վերոնշյալ դասակարգումից բացի, առանձնացվել են նաև իմաստափոխության դրսևորումներ՝ ըստ լեզվական հիմունքների: Այսպես օրինակ՝ Էդ. Ադայանը խոսում է իմաստափոխական դրսևորումների տարբեր խմբերի մասին և դրանք դասակարգում 15 կետում: Դրանցից հիշատակենք այն կետերը, որոնք այս կամ այն չափով առնչվում են նաև մեր նյութին:

– Իմաստափոխություն հումանիշների տարբերակման հիմունքով. օրինակ՝ խմիչք բառն ուներ առհասարակ «ըմպելիք» իմաստը, իսկ հետագայում խմիչք-ը ստացավ «ոգելից ըմպելիք» իմաստը: Աշխարհաբարում տարբերակվել են իմաստով նաև կտուր-տանիք-հարկ-ծածկ բառերը:

– Իմաստափոխություն համանշային պայմանավորվածության հիմունքով. շրթունք բառը ստացել է «ամանի պտունկ, որևէ բանի եզր» իմաստները բարբառների պոռոչ-պտունկ համանիշ բառերի իմաստային տարբերակման հիման վրա:

– Իմաստափոխություն ապաստուգաբանության հիմունքով. հալատամք գրաբարյան բայաձևը ստացել է «հավատամք՝ հավատքի հանգանակ» իմաստը:

– Իմաստափոխություն թյուրըմբռնման հիմունքով, որի դրսևորումներից են հետևյալ օրինակները. վարկաբեկել-ը շփոթվել է վարքաբեկել-ի հետ, այգողք (ըստ Էդ. Ադայանի՝ ծագել է այգ+ողքք, հմմտ. այգալաց) բառի մեջ այգ բաղադրիչը բարբառներում չի պահպանվել, որի պատճառով բառը ստացել է ինքնահող ձևավորումը, ծնեբեկ-ը վերածվել է ծնեփուկ-ի (եփել բառի հետ է զուգորդվել), ճրագալոյց-ճրագալույս, քեռորդի (սխալմամբ համարում են՝ քեռու որդի): Մրանց մի մասում ոչ թե իմաստն է փոխվել, այլ բառի ներքին ձևը, որ նույնպես իմաստափոխություն է:

– Իմաստափոխություն իմաստների բաղարկության հետևանքով. նմանության հետևանքով շփոթ է առաջանում՝ մեղանչել՝ իբրև մեղքը քավել, մեղք գալ, հոգոց քաշել – լաց հանել և այլ բառերում:

– Բառի կրած ձևափոխություններով պայմանավորված իմաստափոխություն. համարել-համրել, կոտրել-կոտորել, հատել-էտել:

Բառիմաստի պատմական զարգացումը, իբրև հետևանք, առաջ է բերում բառիմաստի և բառի բովանդակության մի քանի փոփոխություններ, որոնք իր հերթին Էդ. Ադայանը թվարկում է չորս կետում:

1. Բառիմաստի ընդլայնում. տուն – ստացել է նաև «չափածոյի մի հատված» իմաստը, այդպիսի իմաստային լայնացում են ապրել նաև սուր, բերան, ջուր, քաշել (ստացել է նաև՝ կշռել, ծխել, տնել իմաստները) և շատ այլ բառեր: Այդպիսին է նաև հատուկ անունների հասարակացումը՝ բորոզ, մեկենաս, դարաբաղ (ձիու տեսակ) և այլն:

2. Բառիմաստի նեղացում և մասնավորում. գրք. քաջ բառն ուներ «կտրիճ, գեղեցիկ, ընտիր, ճարտար» և նման իմաստներ, այժմ մնացել է դրանցից «կտրիճ»: Նույն կերպ իմաստի նեղացման օրինակներ են՝ հավ, սեռ, ժամանակ, թիակ: Այդպիսին է նաև հասարակ անունների հատկանունացումը՝ Վանք, Բերդ, Կալեր, Նորք, Հրայր և այլն:

3. Իմաստների բևեռացում. բառի նախնական իմաստին հակադիր իմաստների առաջացումն է, օրինակ՝ դեղ – նախապես նշանակել է «խոտ, դեղաբույս», սակայն ստացել է նաև թույն իմաստը: Աղ, որից է աղու-ն (դրանից է ծագել «աղվոր» բառը) որոշ բարբառներում ստացել է «դառնահամ, թունավոր» իմաստը: Մեղք – ձեռք է բերել «հանցանք» և «գութ» հակադիր իմաստները և այլն:

4. Իմաստների փոխհաջորդում. իմաստափոխության այն դրսևորումն է, երբ բառի հին իմաստը կորչում, մահանում և նոր իմաստ է ձեռք բերում, այլ կերպ ասած՝ բառի նախկին իմաստի փոխարինումն է նոր իմաստով, օրինակ՝ սեղան – «գոհարան» և «կահույքի մի տեսակ», ծախսել – «սպառել, ոչնչացնել» և «վաճառել», խաղալ – «շարժվել» և «խաղ անել», խնդրել – «որոնել» և «խնդրանք ներկայացնել» և այլն: Մա, ինչպես պարզաբանում է Էդ. Աղայանը, կարելի է դիտել իբրև հետևանքի հետևանք, այսինքն՝ երեք կարգի իմաստափոխական իրակությունների (իմաստի ընդլայնում, նեղացում և բևեռացում) հետևանք<sup>5</sup>:

Վերջին դասակարգումը բառիմաստի նեղացում, լայնացում, շրջում՝ հիմնական տարատեսակներով, շարունակում է գործածական մնալ և ներկայացվել հայոց լեզվի գրեթե բոլոր դասագրքերում:

Իմաստափոխության դրսևորումների վերը նշված ավանդական դասակարգումներն ընդհանուր առմամբ կարող են գործածական լինել վաղ աշխարհաբարի համար: Նախ նշենք, որ վաղ աշխարհաբար ասելով նկատի ունենք միջին հայերենից գրական նորմավորված աշխարհաբարի անցման այն լեզվավիճակը, երբ միջին հայերեն-բարբառներ-գրաբար լեզվական իրողությունները գործածվում էին կողք կողքի: XVII-XVIII դարերի վաղաշխարհաբարյան այդպիսի բնութագիր ունեցող մի շարք աղբյուրներից քարտագրել ենք իմաստափոխության տասնյակ դրսևորումներ, որոնք հնարավորություն են տալիս մեկ անգամ ևս անդրադառնալու բառերի իմաստափոխության դասակարգման խնդրին:

Պետք է խոստովանել, որ ամենին հեշտ չէ բառիմաստների, առավել ևս՝ իմաստափոխության դրսևորումների համար դասակարգման ընդհանուր հատկանիշներ ու եզրեր մատնանշել: Իմաստափոխության յուրաքանչյուր փաստ մի առանձին և ուրույն դրսևորում է՝ միայն իրեն հատուկ իմաստափոխության ընթացքի, պատմական միջավայրի, լեզվի տարածքային տարբերակի ընդգրկմամբ: Առավել ճշգրիտ լինելու համար իմաստափոխության ամեն մի դրսևորման ու բառի համար պետք էր մի նոր խումբ առաջարկել: Օրինակ՝ ձող բառը ձեռք է բերել «դրոշ» իմաստը, սակայն հստակ չէ՝ այն իմաստի նեղացմամբ է արտահայտել նախ՝ «դրոշի ձող», ապա՝ «դրոշ» իմաստները, թե՞ իմաստի լայնացման շնորհիվ ձողը սկսել է արտահայտել նաև «դրոշ» իմաստը: Մեկ այլ օրինակ. տուփ բառը գործածվել է «նավակ, լաստ» իմաստներով, բայց հստակ չի կարելի ասել, թե՞ դա արդյունք է տուփ բառի՝ մեզ հայտնի իմաստի նեղացման, թե՞ լայնացման: Շատ հաճախ բառիմաստի նեղացում կամ լայնացում բնորոշումները պայմանական և սուբյեկտիվ են դիտվում, դրանց սահմանները

<sup>5</sup> Է. դ. Աղայան. նշվ. աշխ., էջ 101:

հստակ նշելը հաճախ անհնար է լինում, անգամ երկու հակադիր կերպով կարելի է մեկնաբանել:

Որպեսզի չգնանք հայերենագիտության մեջ ընդունված իմաստափոխության տեսակները մեր քաղաք նյութի վրա ձևելու ճանապարհով, այլ հակառակը՝ իմաստափոխության վաղ աշխարհաբարյան դրսևորումներից բխեցնենք ընդհանուր օրինաչափություններ ու տարատեսակներ, առաջարկում ենք առանձնացնել հետևյալ խմբերը: Դրանց մասին, անշուշտ, տարբեր առիթներով խոսել են հայերենագետները (Լ. Հովհաննիսյան, Վ. Համբարձումյան և ուրիշներ), սակայն խոսքն այս դեպքում իմաստափոխության հատկապես վաղաշխարհաբարյան դրսևորումներին է վերաբերում:

1. Իմաստափոխություն բազմիմաստության հիմունքով: Այս դեպքում բառի մի քանի իմաստների միջից ընդգծվում և տարածում է ստանում հատկապես մեկը, որի գործածությունից էլ առաջ են գալիս նոր իմաստներ: Օրինակ՝ գրաբարում մուտ բառը, ըստ ՆՀԲ-ի, նշանակում է՝ «1. մտնելը, ներս գալը, 2. մտնելու տեղը, անցնելու տեղը» և այլն, իսկ ժամանակագրությունների մեջ նույն բառը հանդիպում է «ամսամուտ, ամսվա սկիզբ» իմաստով:

Բովր բառի «վավաշոտ» միջինհայերենյան իմաստից վաղ աշխարհաբարում ածանցվել է «խոնավ, արգավանդ» իմաստը:

Դատարկել բառի պատճառական ձևը՝ դադարկացնել, ձեռք է բերել հատկապես «բեռնաթափել» իմաստը:

ՆՀԲ-ում հաստել բառն ունի «հաստատել, պնդել, արմատացուցանել» իմաստները, որոնցից պահպանվել է «ապավինել՝ մնալ, հաստատվել» իմաստը «ի մեզ է հաստեր» արտահայտության մեջ:

Պատառ-ը ունի «կոտոր, բեկոր՝ մանաւանդ հացի» (ՆՀԲ) հիմնական իմաստը, Ակոռի գյուղի «քյոթուկում», սակայն, բառը ստացել է «հողակոտոր, հողաբաժին իմաստը»:

2. Իմաստափոխություն համանունության հիմունքով: Այս դեպքում գրությամբ կամ արտասանությամբ նույն կամ նման բառերն իրարից անկախ են ծագել լեզվի տարբեր փուլերում: Դրանք, փաստորեն, պատմական համանունության դրսևորումներ են, որպիսիք շատ ու շատ են հանդիպում վաղ աշխարհաբարյան աղբյուրներում և, կարծում ենք, առավել մանրամասն քննության կարիք ունեն: Բերենք մի քանի օրինակ:

Ստորոտ բառն ունի «լեռան ստորոտ» իմաստը. մեր քննած աղբյուրներում հանդիպում է ստորոտ՝ իբրև «անարգ, ցած», որը ծագել է ոչ թե գրաբարյան բառից, այլ ինքնուրույնաբար առաջացել է լեզվի նոր շրջանում (ստոր+ոտ)՝ դառնալով գրաբարյան համապատասխան բառի համանուն:

Լուսոյմօտ բառը կիրառվել է «լույսին՝ առավոտվան մոտ, լուսադեմ» իմաստով և իր հնչումով ու կազմությամբ համանուն է լուսամուտ «պատուհան» բառին՝ վերջինի հետ ծագման ընդհանրություն չունենալով:

Հնատիպ գրքերում հանդիպող տեսակ «տեսողություն» բառը ծագումով և իմաստով նման չէ տեսակ «կերպ, սեռ, եղանակ...» բառին և սոսկ համանուն է հանդես գալիս:

Տերունի-ն միջին հայերենում ունի «կիրակի» իմաստը, իսկ վաղ աշխարհաբարյան դիվանական փաստաթղթերում ցույց է տալիս անմիջականորեն Էջմիածնին պատկանող կամ անմիջնորդ ձևով արքունիքին (պարսկական) ենթակա բնակավայրերը, շրջանները. այս երկու բառերը, դարձյալ, համանուններ են:

Ծագմամբ իրար հետ անմիջականորեն չեն կապված նաև XVII դարում հանդիպող ուղղական՝ իբրև «ուղղադավան» և ուղղական (հոլով) բառերը, դրանք հանդես են գալիս որպես պատմական համանուններ:

3. Իմաստափոխություն բարբառային կամ խոսակցական տարբերակների հիման վրա: Միննույն բառը կամ նրա հնչյունափոխված տարբերակը խոսակցական լեզվում կամ բարբառում կարող է ստանալ գրական լեզվից տարբերվող իմաստ: Դրանք հենց բուն բարբառային բառերն են: Վաղ աշխարհաբարյան բնագրերում նման օրինակների շատ կարելի է հանդիպել:

Միջ. հայ. «հետին, վերջին» իմաստն ունեցող յետի բառը մեր հանդիպած բնագրում ստացել է մեկ ուրիշ՝ «հաջորդ» իմաստը, և իմաստային այս փոփոխության ակունքը, անշուշտ, լեզվի խոսակցական տարբերակն է:

Աղմուք (> աղմուկ)՝ իր սկզբնաձևի համեմատ հնչյունափոխություն կրած բառը բարբառի հարթության վրա ստացել է նոր իմաստ՝ «վեճ, կռիվ»:

Խմել բառի նոր՝ «հարբել» իմաստը սովորական է գրեթե բոլոր բարբառների ու խոսակցական լեզվի համար, և դրա առաջին կիրառություններին նույնպես հանդիպում ենք վաղ աշխարհաբարյան աղբյուրներում:

Ջարդել բառի՝ խոսակցական լեզվում ունեցած «վատ խոսել, կոտրատելով խոսել» իմաստին հանդիպում ենք արդեն XVII դարում հետևյալ կապակցության մեջ՝ «կէսն հայերէն, կէսն արապերէն ջարդելով»:

Մրանք «աշխարհաբարյան իմաստափոխություններ են, որոնք տեղի են ունեցել ժողովրդախոսակցական լեզվում» նրա տարածքային բոլոր դրսևորումներում<sup>6</sup>:

4. Իմաստափոխություն փոխառյալ բառերի իմաստների փոփոխման ճանապարհով: Տարբեր ժամանակներում տարբեր աղբյուրներից կատարված փոխառյալ միևնույն բառը ձեռք է բերում տարբեր իմաստներ:

Օրինակ, դասապ փոխառյալ բառն ունի «մսագործ, մսավաճառ» իմաստը, իսկ վաղ աշխարհաբարում հանդիպում է «հասարակ մարդ» իմաստով:

Թուրքերենից փոխառյալ տապան «նրբան» բառի հիման վրա առաջացել է տապան չափել՝ «հեռանալ» իմաստն ունեցող հարադիր բայը:

Ասլ արաբական փոխառյալ բառի՝ միջին հայերենում («արմատ, ծագում») և վաղ աշխարհաբարում («փաստաթղթի բնագիր օրինակ») ունեցած իմաստները տարբերվում են իրարից:

Դարալիուլ բառը միջին հայերենում վկայված է «բարձր տեղից պոկված՝ փուլ եկած» իմաստով, մինչդեռ պարսկերենից փոխառյալ այս բառը (պարսկ. dare+pol) մի հիշատակարանում նշանակում է «լեռնանցք, կիրճ»:

<sup>6</sup> Է. Դ. Աղ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 75:

Մանահնի հիշատակարանում հանդիպում է պարսկերենից փոխառյալ ճիպայ (պարսկ. յիօ) բառը՝ «փոստրակ» իմաստով, մինչդեռ դրան համապատասխանող ջիպպե/ջուպպա բառը միջ. հայ. ունի «արևելյան տարազի երկար և լայն վերնագգեստ» նշանակությունը:

5. Իմաստափոխություն խոսքիմասային փոխանցմամբ: Հայերենի զարգացման մի փուլից մյուսին անցնելիս հաճախ բառերը փոխում էին իրենց խոսքիմասային իմաստը, դրանով պայմանավորված նաև՝ ձևաբանական նոր հատկանիշներ ստանալով:

Խոստահար բառը ՄՀԲ-ում բերված է որպես գոյական՝ «խոտհարք, խոտատեղ» իմաստով, իսկ Առաքել Դավրիժեցու երկում գործածվել է որպես ածական և ունի «հնձված խոտի նման» իմաստը: Անշեն բառը ժամանակագրության հեղինակը գործածել է՝ հակադրելով շեն-ին, և այստեղ արտահայտում է ոչ թե «չշինված, կործանված», այլ «աղքատ»:

Բիւրեղէն բառը ՄՀԲ-ում ունի «բյուրավոր» իմաստը, իսկ վաղաշխարհաբարյան բնագրերից մեկում ստացել է «բյուրեղ, բյուրեղյա» իմաստը:

Կարծում ենք՝ կարևոր է նաև իմաստափոխություն կրած բառերը համեմատության մեջ դնել գրաբարի և միջին հայերենի տվյալների հետ, քանի որ համեմատության եզրը, այնուամենայնիվ, գրաբարում կամ միջին հայերենում տվյալ բառի ունեցած իմաստն է: Ըստ այդմ՝ հստակորեն տարբերակվում են երկու խումբ իմաստափոխ բառեր:

Բառեր, որոնց իմաստը փոփոխվել է գրաբարյան իմաստի համեմատ:

Անկասկածությւն – գրաբարում ունի «ասպահովություն», վաղ աշխարհաբարում հանդիպում է «հարստություն» իմաստով:

Ափորձ – գրբ. «փորձ չունեցող», վաղ աշխ. «անփորձանք, փորձանքից զերծ»:

Խնդրակ – գրբ. «1. մարդ փնտրող, 2. վեճ անող, 3. օգնել ուզող», վաղ աշխ. «քննող, զննող, ուսումնասիրող»:

Ծրագրել – գրբ. «ստուերագծել, նշանակել զծիրն, նախանկարել», վաղ աշխ. «նկարագրել»:

Պատառ – գրբ. «կոտոր, բեկոր՝ մանաւանդ հացի», վաղ աշխ. «հողակտոր, հողաբաժին»:

Վեհերեւել – գրբ. «վախենայ, ծուլանայ», վաղ աշխ. «վեհ տեսքով երևալ՝ ներկայանալ» և այլն:

Բառեր, որոնց իմաստը փոփոխվել է միջին հայերենի համեմատ:

Գծող – միջ. հայ. «ընդօրինակող գրիչ», վաղ աշխ. «հեղինակ, գրող»:

Ժողովակ – միջ. հայ. «հավաքված, կուտակված», վաղ աշխ. «փոքր, աննշան ժողով, ժողովիկ»:

Խարար – միջ. հայ. «քուրձ», վաղ աշխ. «էժան ապրանք» (?):

Ճիպայ – միջ. հայ. «արևելյան տարազի երկար և լայն վերնագգեստ», վաղ աշխ. «գրպան, փոստրակ»:

Շեշտաւոր – միջ. հայ. «շեշտված, շեշտակիր», վաղ աշխ. «հմուտ, վարժ» և այլն:

Ստորն ներկայացնում ենք իմաստափոխության մեր քաղած դրսևորումներից մի քանիսը: Դրանք հայերենի պատմական զարգացման արտացոլումն են և լավագույնս ցույց են տալիս միջին հայե-

րենից աշխարհագրագրին անցման շրջանում կատարված իմաստային տեղաշարժերը մեր լեզվում:

ԱՂՄՈՒՆՔ – աղմուկ բառի բարբառային աղմուկ տարբերակը ստացել է «վեճ, կռիվ» իմաստը. «Մեր մեջն մէկ փոքր աղմուկ անկալ՝ ասեցինք, թէ Փսկեր հողն Ոռնակայ ձորին բաղալ չէ» (Յիշ. Սանահն., 173):

ԱՆՇԷՆ – հեղինակը հակադրում է շեն և անշեն բնակավայրերը, վերջինն այստեղ արտահայտում է ոչ թե «չինված, կործանված», այլ «աղքատ» իմաստը. «յազգն մահմետականաց ըմբռնեալ էին զգաւառս Հայոց, աւերելով եւ գերելով զամենայն շէնս եւ զանշէնս» (Մանր ժաման., II, 240):

ԱՆՓՈՐՁ – գործածվում է ոչ թե «փորձ չունեցող», այլ՝ «անփորձանք, փորձանքից զերծ» իմաստով. «Աստուած զքո եղբօր թագաւորութիւնն եւ զքո բարձրութիւնն հաստատուն եւ անփորձ պահեցէ աստ եւ ի հանդերձելումն» (Մ. Շահմ. Յիշատ., 319):

ԱՍԼ – ըստ ՄՀԲ-ի՝ միջ. հայ. ապ (արար. 'asl ձևից) բառը գործածվում է մի քանի իմաստներով՝ «1. արմատ բույսի, 2. ցեղ, ծագում, էություն, 3. ազնիվ, ցեղական»: Այստեղ գործածվում է «փաստաթղթի բնագիր» իմաստով. «Ես՝ Սուրբ Նախավկայի առաջնորդ Յոհան Վարդապետս ապլն տեսի, սավատս (պատճեն) մօհրեցի, ես՝ Սարգիս էրէցս, սորա ապլն տեսի սաւադս մօհրեցի» (Դիւան Նոր Ջուղ., 97):

ԱԻՏԱԼ – (հաւատալ>աւտալ) ՄՀԲ-ն ներկայացնում է «հավատալ» իմաստով, այստեղ ունի «վստահել» իմաստը. «Թէ տեղաց (այստեղ) մի պարտք անելու ջանամք, հինգ դուռուշ մարդի չի աւտար տալու» (Դիւան Ս. Յակ., 1941, 86):

ԲԱԶՄԱԿԱՆ – հարկի մի տեսակ է, թերևս՝ խնջույքների, հավաքույթների համար տրվելիք հարկ, որն առաջացել է գրաբարի բազմական «սեղանակից, խնջույքի մասնակից» բառի իմաստի փոփոխմամբ. «Եպիսկոպոսս և առաջնորդ սուրբ ուխտիս Բարսեղ արհիեպիսկոպոսս և միաբանքս մեզ հէնց գիր տվին (համաձայնություն տվեցին՝ ստորագրեցին), որ մեզանէ էլ բազմական չուզեն» (Յիշ. Սանահն., 136):

ԲՈՎՐ – միջ. հայ. գործածվում է «վավաշոտ, շվայտ», այստեղ՝ «արգավանդ, խոնավ» (՝) իմաստով. «Իմ կամաւ և ուժար սրտիւ Ոռնակայ իմ ծիլ բովր հողն տվի Բարսեղ եպիսկոպոսին և առաջնորդ Սանահնու (Յիշ. Սանահն., 176):

ԳՐԱՊԱՆ – գրաբարում ունի «հագուստի ծայրը, գրպան» իմաստը, այստեղ՝ «գրերի, դիվանի պահապան». «Ընդ որս էր եւ իշխան ոմն՝ որ էր գրապան թագաւորական գրեանց» (Դաւրիժ., 348): Բառը տարբեր է Սուրբ Գրքում հանդիպող գրապանակ-ից. հմմտ. «Լայնեն զգրապանակս իւրեանց, եւ երկայնեն զքղանցս հանդերձից իւրեանց» (Մատթ. ԻԳ-5), ուր գործածված է «գրուած իբր պահպանակ» իմաստով, և ըստ ՆՀԲ-ի, հատկապես այս բառից է առաջացել բարբառների գրպան բառը:

ԴԱԴԱՐԿԱՅՆԵԼ – «բեռնաթափել» իմաստն է ստացել դատարկել բառի բարբառային պատճառական ձևը. «Դարցեալ ժէգիդունի նավերն Կալիս կու բառնան, Կալիս կու դադարկացնեն այլ տեղ չկայ (Զ. Ագուլ. Օրագր., 16):

ԴԱՐԱՅՓՈՒԼ – ըստ Սանահնի վանքի հիշատակարանները հրատարակողի՝ դարայվուլ ծագում է պարսկ. *dare+pol* «լեռնանցք, կիրճ, անդաստան» բառից: Նշված իմաստը տարբերվում է ՄՀԲ-ում վկայվածից, որը նույն բառի համար տալիս է այլ իմաստ՝ «բարձր տեղից փուլ եկած՝ պոկված»։ «Ըստեփանոսի գեղի սինուռն՝ Ղօրչու մեծ խմհատն ... գայ դարիվէր հասարականց (հասարակաց) խմհատի ծէրն Աղբիւրի գլխի դարայվուլն (Յիշ. Սանահն., 148):

ԵՐԿԱԹ – մի շարք աղբյուրներում երկաթ բառը կիրառվել է «նավի խարիսխ» իմաստով, դրանից էլ ծագել է երկաթ ձգել «խարիսխ զգել» հարադիր բայը. «Հանդարտ հով մի էլաւ, յետնուց ժամանակին Եաֆայու առաջին երկաթ ձգեցանք» (Ձուար քահ., 1867, 133): «Սեպտեմբերի 18 օրն չորեքշաբթի կանուխ սապահ նամագուն (աղոթքի ժամին) Ըռոտօզ երկաթ ձգեց» (Ձուար քահ., 1867, 131): Որ այս հարադիր բայը վաղ աշխարհաբարում ուներ լայն գործածություն, հավաստի է դառնում Ագուլիսի (կամ Ձուղայի) բարբառում պահպանված արկաթ զձել հարադրության օրինակով. «Յամի ՌՃԹ (1660) յունվարի մէկումն նավն եկին Բսպանիայ, ի քաղաքն Կալիս արկաթ զձեցինք» (Ձ. Ագուլ. Օրագր., 55): «Այսօր եկինք Իզմիր, արկաթ զձեցինք, դուրս էլանք ցամաք» (Ձ. Ագուլ. Օրագր., 55): Մեկ այլ օրինակ՝ «Իսկ նաւավարքն յունաց ազգին / Յետ այնորիկ գերկաթն առին» (Ուշ միջն. բան., 561):

ԺԱՄ – ժամ բառը «եկեղեցի» իմաստով հանդիպում է վաղ շրջանի աղբյուրներից, այդ մասին վկայում է նաև ՆՀԲ բառահոդովածը. «կարգաւորութիւն ժամուց ի պաշտամունս եկեղեցոյ. ժամասացութիւն. ուստի և ռամկօրէն եկեղեցին ժամ ասի»: Ահա նշված իմաստափոխության մի դրսևորում վաղաշխարհաբարյան բանաստեղծության մեջ. «Իսկ ժողովուրդն դիմեցին / Ի դարպաս եպիսկոպոսին / Կուզէին գնա քարկոծէին / Թէ չէ տվեալ զբալնիք ժամին» (Ուշ միջն. բան., 101):

ԺՈՂՈՎԱԿ – ՄՀԲ-ում ունի «հավաքված, կուտակված» իմաստը, այստեղ՝ «փոքր, աննշան ժողով, ժողովիկ»։ «Ձեռնագրով գտուրք ժողովն Քաղկեդոնի ընկալան և գժողովակն Դվնայ դատապարտեցին» (Ստ. Ռօքշայ, 73):

ԼՈՒՍՈՅՄՕՏ – գործածվել է ոչ թե «պատուհան, լուսամուտ», այլ՝ «լուսադեմ, լուսանալուն մոտ, առավոտ» իմաստով. «Թվին ՌՃՁԱ ապրիլի Ա օր, որ օրն է շաբաթ լուսոյմօտն Ովսէփն մօրէն ընծայեցաւ, աշխարհ Եկաւ» (Մանր ժաման., I, 294):

ԽՆԴԵԿ – ԱԲ-ում բառն ունի «1. մարդ փնտրող, 2. վէճ անող, 3. օգնել ուզող» իմաստները: Այստեղ՝ «քննող, զննող, ուսումնասիրող»։ «Ամենայն ազգք և լեզուք բնականապէս խնդրակք են եզրակացութեանն ճշմարտութեան» (Դիւան Ս. Յակ., 1940, 316): «Եւ այսմ ունիմ զձեզ իսկ վկայեալս աստանօր՝ թէ խնդրակ իցեմ սմին» (Դիւան Ս. Յակ., 1940, 316):

ԽՇԿԵԼ – բառը գործածվել է միջ. հայ. խշկել «փոքրացնել, պակասեցնել» բառից տարբերվող իմաստով, այստեղ ունի «քայքայվել» իմաստը. «...իսկ բժշկին անհմուտ գոլով՝ յոլովագոյն ի գործ էարկ զջերմ դեղն ի մարմին նորա, յորմէ պատճառէ չորացեալ խշկեցան ամենայն մասունք ներսին փորոտեաց նորա» (Դաւրիժ., 318):



*ԽՐԱՏԵԱԼ* – պետք է ենթադրել, որ գրաբարի խրատեմ «խրատ տալ, հորդորել, ուղղել» բառը աղբյուրներում ու բառարաններում չարձանագրված մեկ այլ իմաստ էլ է ունեցել, որը պահպանվել է վաղ աշխարհաբարում որպես «հղկել», այստեղ՝ «հղկ(վ)ած»։ «Սկսան զժամատունն շինել խրատեալ քարամբք եւ մածուցեալ կրով» (Դարիժ., 283)։ «Փիլիպպոս սկսաւ զայն եւս նորոգել խրատեալ քարի եւ մածուցեալ կրով» (Դարիժ., 285)։ Քիչ հավանական է թվում գրաբարի խառատել «խառնելով հատանել» բառի հնչյունական փոփոխմամբ խրատեալ-ի ծագումը։

*ԿԱՆԱՉ* – բառը փոխանվանական կիրառությամբ ձևեր է բերել նոր իմաստ՝ «կանաչ փայթոց», որ կրում էին մահմեդական մի աղանդի անդամները. «Խաչատուրն հայհոյեաց գնա եւ զկանաչն նորա» (Դարիժ. 405)։ Նույն իմաստով կանաչ բառը գործածվել է նաև կանաչ գլուխ կապակցության մեջ, որպես «կանաչ գլխանոց՝ փայթոց կրող մարդ»։ «Նոր դատին յունիսի ԺԹ եմուտ ի քաղաքս, կանաչ գլուխ է և շինտիլիկ աղէկ մարդ կ'երևայ» (Դիւան Ս. Յակ., 1941, 84)։

*ԿՈՒՆԵԼ* – գրավել, զավթել, նաև՝ պարտվել. «Թվին ՌԿԵ (1616) ... գիշեր կիրակլուս, ազգն յուռուս կոխեց Կաֆան և աւիրեց բազում տեղի, քաղաքս այս կրկին նորոգեսցի» (Մանր ժաման., I, 208)։ «ՌՇԸ թրւականին ազգն ուռուս եկաւ Բ աւուր ճանփայ ու կոխեց Խարա-Սուն... մայն ու խազնան առաւ, ետոյ Սուղտան կոխեց» (Մանր ժաման., I, 215)։ «Ի Թաւրէզ պատերազմեցան եւ կոխվեցաւ Ջղալօղլին եւ փախեաւ» (Մանր ժաման., I, 478)։

*ՀԵՏԱՄՈՒՍ* – Առ. Դավրիժեցու երկում՝ «հետամուտ» իմաստը, հետաքրքիր լինել՝ «հետամուտ լինել»։ «Որք եւ պատահեցան կաթուղիկոսին Մեքիսէթի՝ եւ ետուն նմա աղերս, եւ ոսկի դահեկանս, զի մի լիցի հետաքրքիր եւ կամ վրէժխնդիր գործոց նոցա» (Դարիժ., 167)։

*ԶԳԵԼ* – ձգել բառի՝ բարբառներում, խոսակցական լեզվում, արևմտահայերենում հայտնի «թողնել» իմաստով կիրառությանը հանդիպում ենք արդեն XVII դարի բնագրերում. «Ռ թուման թագաւորին թարջիմանն ինձ վրայ է ձգած. տայք՝ զրէրն առնուք» (Դիւան Նոր Ջուղ., 92)։

*ԶՈՂ* – իմաստը պահպանվել է հատկապես «դրոշի ձող», ապա և «դրոշ» փոփոխությամբ։ Դրա ապացույցն է հետևյալ հատվածը, ուր ձողը թարգմանված է թուրքերենի նույնիմաստ բառով. «Բայց գոր ձողն կրէր՝ կենդանի ըմբոնեալ տարան ընդ ինքեանս ի բանակն Տաճկաց, նոյնպէս եւ զձողն առին, որ թարգմանի տաճիկ լեզուաւ պայրախ» (թուրք.-պարսկ. բայրակ «դրոշ») (Յ. Կամենացի, Պատմ., 51)։ «Բայց ի հեթմանին զօրացն զձողն առին» (Յ. Կամենացի, Պատմ., 54)։

*ԶՈՂԱԿԻՐ* – իմաստի զարգացումը տե՛ս վերը՝ *ԶՈՂ* «դրոշ» բառի տակ, որից բաղադրվել է ձողակիր՝ «դրոշակիր» նոր բառն ու իմաստը. «Բսկ զօրք Լեհաց եւ Խազախացն ... ճակատէին ընդ նոսա, մինչեւ սպանին զերկու ձողակիրս նոցա, եւ զգլուխսն եւ զձողսն բերեալ թագաւորորդոյն» (Յ. Կամենացի, Պատմ., 60)։

*ՂԱԲԱԼ* – ծագել է թուրք. *gab* «աման, պատյան» բառից, որը հիշատակարաններում և այլ աղբյուրներում գործածվում է որպես չափման միավոր. «Բւր հող ու ջրովն և Նորա-

տուս Լ դարբալ ձեռք վախճալ արարի Սանահնու Սուրբ Աստուածածնին և Սուրբ Սամէրուն (Յիշ. Սանահն., 145):

ՃԲՊԱՅ – ՄՀԲ-ն ներկայացնում է ջիւպպէ՝ հղում անելով ջուպայ բառին, որը նշանակում է «արնէյան տարագի երկար և լայն վերնագգեստ»: Ըստ բնագիրը կազմողի՝ ճիպայ բառը ծագում է պարսկ. յիւ «գրպան, փոստրակ» համարժեքից. «Մեր յօժար սրտիւ ծախեցինք ի վերայ Բարսեղ պարոնտերին Ջրանցի ջամփի տակի ճիպէքն, իւր վերի կոան հողն... Ջումանց ճիպէքի վերի կուռն» (Յիշ. Սանահն., 227):

ՄԵԾԱՆԱԼ – հարստանալ. «իւր քվեր աղչիկն շահն տվել այ Մուսաբէկն, Ե խաս գեղն տվել Մուսաբէկն, այսպէս մեծացել ա» (Զ. Ագուլ., Օրագր., 144):

ՄՈՒԽ – ՆՀԲ-ն ներկայացնում է որպէս ռամկական բառ՝ «ծուխ» իմաստով, վաղ աշխարհաբարում բազմիցս հանդիպում է «ծխախոտ» իմաստով. «Խիստ է և բարկասիրտ թագաւորն ... զայն նոր էլեալ չար մուխն, որ ասի թութուն, և սն ջրի ըմպելոյ տներն աւերեց» (Մանր ժաման., II, 400): «Թէ մէկ մի գտնու, որ մուխ կամ սն ջուր ըմպեն, ազատելոյ չէ» (Մանր ժաման. II, 400): Մուխը «ծխախոտ» իմաստով ունի նաև Ս. Մայիսայանի «Հայերենի բացատրական բառարանը», ուր ներկայացված է որպէս ծածկաբանություն:

ՅԱԲԵՂԱՅ – գործածվում է «յաբեղայ սարկաւագ» կապակցության մեջ, և դա ենթադրել է տալիս, որ իմաստի նեղացմամբ ստացել է իր սկզբնական՝ «կուսակրոն քահանա» իմաստից տարբեր մեկ այլ իմաստ, գուցէ՝ սարկավագին բնորոշող մի մակդիր, դեռևս չամուսնացյալ սարկավագ. «Դաւիթ վարդապետն նրիբակ եկաւ մեզի Էջմիածնէն, նորրնծայ տէր Յակոբ կաթողիկոսէն, լուսաբուղ մեռնուան, մէկ յաբեղայ սարկաւագով» (Մանր ժաման., I, 227):

ՇԵՇՏԱԲՈՐ – ՄՀԲ-ում ունի «շեշտված, շեշտակիր» իմաստը, այստեղ՝ «հմուտ, վարժ». «Ըստ ժամանակին առ հասարակ դիւցազանց հետևամարտքն (հետևակ) ի վերայ ուսոց ձիոց բերեալք և պարսաւորքն առ հասարակ դիպ աղեղունք շեշտաւորք ի սուսեր և ի նիզակ վառեալք մերկք վահանօք... պարածածկեալք (Մանր ժաման., I, 269):

ՈՒՂՂԱԿԱՆ – Եփրեմ Ղափանցու (XVII դ.) «Ընդդէմ երկարնակաց» ոտանավորում բառն ունի «ուղիղ՝ ուղղադավան» իմաստը, և սոսկ համանուն է հանդես գալիս ուղղական (հոլով) բառին. «Սոյն այս կերպիւս օրինաց բան/Միշտ պարսաւեն յազգս թորգումեան/Թէ՛ ձեր օրէնքն չէ ուղղական/Այլ է խոտան և անպիտան» (Ուշ միջն. բան., 569):

ՊԱՀԵՍ – Առ. Դավրիժեցու երկում գործածվել է «բանտ» իմաստով. «Առաքեաց ի Շիրազ քաղաքի ունել զնա ի պահեստի, եւ անդէն եւս կարգեալ ի վերայ նորա պահապանս» (Դավրիժ., 142): «Հրամանաւ Շահաբասին կայր ի պահեստի մայրն Թամրագին, որոյ անունն էր Մարիամ» (Դավրիժ., 144):

ՋԱՐԴԵԼ – գրաբարի ջարդել բառի «ջախել, կոտորել, խորտակել, մանրել...» (ՆՀԲ) իմաստի «վատ խոսել, կոտորատելով խոսել» իմաստային անցմանը հանդիպում ենք արդեն XVII դարում.

«Կէսն հայերէն, կէսն արապերէն ջարդելով. իմացիր որ մղսի ասելն քէչիյին կասեն» (Ձուար քահ., 1868, 115):

ՍՏՈՂՈՏ – գործածվել է ոչ թե «ստորին կողմ», այլ «ցած, անարգ» իմաստով. «Բագարատ իշխանն Հայոց՝ ստորոտ և լիրբ ի չարախօսութենէ, ոմանց դրեալ խորհիտ զկաթողիկոսն» (Ստ. Ռօքշայ, 94): Ստորոտ բառը նշված իմաստով հանդիպում է գրաբարի ստորոտաբարձ «նշանակ ցոփութեան» բառում (ըստ ՆՀԲ-ի), և ստորոտ բառի հատկապես այդ իմաստը անկախաբար գործածված հանդիպում է վաղ աշխարհագրում:

ՎԵՀԵՐԵԻԵԼ – ԱԲ-ում նույն բառն ունի «վախենալ, ծուլանալ» իմաստները, այստեղ՝ «վեհ տեսքով երևալ՝ ներկայանալ». «յօժանդակութեամբ սրբազան և վեհերևեցեալ հայրապետիս ... մեք ասենքեան կնիք ունողքս կնքեցաք» (Դիւան Նոր Ձուղ., 81):

ՏԱՐԲԵՐԱՆԱԼ – գործածվել է ոչ թե «տարբերակել, տարբերել», այլ «տարբերվել» իմաստով. «Բուրաստանեացն շուշանք և ի ջուրս, որ վայելչանայ / Գին չեն մագ մի թարթիչիդ վեր ի վայր, որ տարբերանայ» (Ուշ միջն. բան., 445): Նույն իմաստով ՆՀԲ-ն ունի տարբերիլ բառը:

ՏԵՍԱԿ – գործածվել է ոչ թե «սեռ, տեսակ» իմաստով, այլ՝ տեսողություն, հմնտ. չորս զգայարանների անվանումները՝ տեսակ (տեսողություն), լսակ (լսողություն), հոտոտակ, ճաշակ. «...ճանօթութիւնս այս յառաջագայի ի հնկից զգայութեանց զլիաւորաց մարմնոյ, այսինքն ի տեսակէ, որ է յաչս, ի լսակէ, որ է յականջս, ի հոտոտակէ, որ է ի քիմս, ի ճաշակէ, որ է ի բերանն և ի շոշափակէ, որ է ի ձեռս (Նոր. ծաղ. գոր., 4):

ՏԷԼՈՒՆԻ – միջին հայերենում ունի «կիրակի» իմաստը, այստեղ բառը ցույց է տալիս այն շրջանները, որոնք, ըստ Լեոյի, անմիջապես պատկանում էին Էջմիածնին. «Ի վերայ օրհնեալ տէրունի ժողովրդականացոյ մերոց կարգեաց առաջնորդ և հոգաբարձու զհոգևոր որդին մեր զՅոհան Վարդապետն» (Դիւան Նոր Ձուղ., 79): «Իսպահանայ տէրունի երկրներն» (Դիւան Նոր Ձուղ., 81):

ՏՈՒՓ – ըստ Առ. Դավրիժեցու՝ բազմաթիվ հայեր Արաքսն անցնել են տուփով: Այս և մյուս գործածությունները ցույց են տալիս, որ բառը նշանակում էր «լաստ» կամ «նավակ». «Ի բազմութենէն ոչ բաւէր նոցա նաւ կամ տուփ, որով անցցեն զգետն» (Դավրիժ., 79): «Ձքարն եւ զկղմինտրն ի զեղջէն Աստապատայ բերէին տփով զերեսօք շուրց Երասխ գետոյն» (Դավրիժ., 281): «Մէկ սարկաւագ, եւ երեք աշխարհական մտին ի տուփ եւ սկսան կոտորել զպաղն (սառույցը)» (Դավրիժ., 488):

ՔԱՌԱԿՈՒՄԻ – գլխարկի տեսակ, որ քառակուսու ձև ուներ. «Այլ եւ գորպիսութիւն եւ զձեւ զգեստուցն գտին ի գրոց, զքուսիթայն, որ է գլխոյ թօփին: Եւ սահմանեցին ամենեցուն, թէ իւրաքանչիւր որ իւրովք զգեստուքն շրջեսցի, եթէ միայնակեաց իցէ՝ քուսիթային եւ քառակուսովն» (Դավրիժ., 220):

Դժվար չէ նկատել, որ նշված օրինակների մեջ զգալի թիվ են կազմում իմաստափոխության այն դրսևորումները, որոնք տեղի են ունեցել ժողովրդախոսակցական լեզվի տարածքային, հատկապես արևելյան և արևմտյան տարբերակներից որևէ մեկում կամ բարբառներում: Դա հենց վաղ աշխարհագրի յուրահատկությունն է. որպես լեզվավիճակ, նոր ձևավորվող աշխարհագրան

իր մեջ ներառում է միջին հայերենի ուշ շրջանի, ժամանակի բարբառների, միջիտասակցական «քաղաքացիական» հայերենի, աշուղական հայերենի իրողությունները՝ իրարից անբաժան: Վաղ աշխարհաբարի «միասնական» այդ լեզվավիճակը նկատելի է նաև իմաստավորության մեր քաղաժ օրինակներում. դրանք դեռևս չեն բաժանվել արևմտահայերեն և արևելահայերեն ճյուղավորումների:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԲ – Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Անթիլիաս, 1988
- Դարիժ. – Առաքել Դարիժեցի. Գիրք պատմության, աշխատ. Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990
- Դիւան Նոր Զուղ. – Դիւան Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, մասն Ա, Էջմիածնի կաթողիկոսների կոնդակներ (1652–1705), աշխատասիրեց՝ Խաժակ Տէր-Գրիգորեան, Անթիլիաս, 2003
- Դիւան Ս. Յակ. – Դիւան Սուրբ Յակոբայ, Ա–ԺԹ.– Միոն, 1930 նոյեմբեր–1941 յուլիս–օգոստոս
- Զ. Ագուլ. Օրագր. – Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը, Երևան, 1938
- Զուար քահ. – Զուար Ճիյէրճի Օղլու քահանայի ճանապարհագրութիւն և ուխտ յԵրուսաղէմ.– «Բազմավէպ», 1867–1869
- ՀԲԲ – Մտ. Մալխասեանց. Հայերէն բացատրական բառարան, հ. I–IV, Երևան, 2010
- Մանր ժաման., I – Մանր ժամանակագրություններ (XIII–XVIII դդ.), հ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951
- Մանր ժաման., II – Մանր ժամանակագրություններ (XVII–XVIII դդ.), հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956
- ՄՀԲ – Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան. Միջին հայերենի բառարան, հ. 1–2, Երևան, 1987–1992
- Ս. Ծահմ. Յիշատ. – Մահտեսի Ծահմուրատի Հիշատակարանը. Փետրվար, 1683 թ.– Հ. Անասյան. XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 315–319
- Յիշ. Սանահն. – Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քեթուկը), աշխատ. Պարոյր Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007
- Յ. Կամենացի, Պատմ. – Յովհաննէս Կամենացի. Պատմութիւն պատերազմին Խոթինու, աշխատասիրութեամբ Հ. Ս. Անասեանի, Երևան, 1964
- ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա–Բ, Վենետիկ, 1836–1837:
- Նոր. ծաղ. գոր. – Նորագոյն ծաղիկ գորութեանց, թարգմ. Յովհ. Կոստանդնուպոլսեցու, Վենետիկ, 1685
- Ստ. Ռօքշայ – Ստեփանոսի Ռօքշայի Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, հրատ. Հ. Ռսկեան, Վիեննա, 1964
- Ուշ միջն. բան. – Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVIII դարեր), աշխատասիրությամբ Հասմիկ Սահակյանի, հ. 2, Երևան, 1987

## НОВАЯ ПОПЫТКА КЛАССИФИКАЦИИ СЕМАНТИЧЕСКИХ ИЗМЕНЕНИЙ В НОВОАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

*НОРАЙР ПОГОСЯН*

## Р е з ю м е

Семасиология изучает историю значения слов. Примеры семантических метаморфоз, которые содержатся в новоармянских источниках XVII–XVIII вв., отражают развитие значения слов в истории армянского языка. Тексты из различных территорий восточной и западной Армении – Акори, Агулис, Новая Джуга, Ван, Константинополь и др. – различаются также по жанру: рассмотрены исторические, дневниковые, хронологические произведения. Анализ этих источников дает полное представление о семантических явлениях раннего периода новоармянского языка. Рассмотренные семантические изменения можно классифицировать по следующим основным группам: семантические метаморфозы по полисемии слов; по омонимии; основанные на диалекте; изменение значения заимствованных слов; в результате преобразования частей речи. Представляется также большое количество слов, значения которых претерпели изменения в древне- и среднеармянском языках.

## A NEW ATTEMPT OF CLASSIFICATION OF SEMANTIC METAMORPHOSIS IN EARLY MODERN ARMENIAN LANGUAGE

*NORAYR POGHOSSYAN*

## S u m m a r y

Semasiology studies the history of meaning of words. Examples of semantic metamorphosis that contain Armenian sources of the 17th–18th centuries illustrate the evolving meanings of words throughout the language's history. Texts are from different parts of Eastern and Western Armenia: Acori, Agoulis, Nor Jougha, Van, Constantinople and so on. These writings also belong to different genres: historic, diary, chronologic. Analysis of these sources gives an idea that it is possible to have a complete perspective on the semantic mutations the Armenian language has undergone. Semantic mutations highlighted include a few general groups: semantic metamorphosis as a result of polysemy of words; by means of homonymy; dialectically based; by mutation of the meaning of the loan words; as a result of the absolute transmutation of the meaning of the word. A multitude of word samples are represented that have changed their meaning in ancient and medieval Armenian languages.